Էներգետիկ ռեսուրսների, էներգակիրների արդյունավետ օգտագործումը, ջերմային կորուստների կրճատումը, էներգախնայողության համակարգի ներդրումը, այլընտրանքային էներգակիրների օգտագործումը պետք է լինեն մոտակա տարիների հրամայականը: Ելնելով այս ամենից՝ առաջարկում ենք շենք-շինությունների կառուցման նախագծերում պարտադիր նախատեսել արևային գեներատորների, կոլեկտորների տեղակայման հնարավորություններ: Կարծում ենք՝ սա ևս մեծ խթան կարող է հանդիսանալ մեր երկրում արևային էներգետիկային անցնելու և դրա հետագա զարգացման համար:

НАРИНЕ МИНАСЯН

ПРОИЗВОДСТВО ЭКОЛОГИЧЕСКИ ЧИСТОЙ ЭНЕРГИИ В АРМЕНИИ

Ключевые слова: *устойчивое развитие, возобновляемые источники энергии, энергоэффективность, экологически чистая энергия, альтернативная энергия.*

Развитие альтернативной, и тем более, восстанавливаемой энергии, в первую очередь результат мудрой и правильной политики, в отличие от идеи восстанавливаемой и неограниченной энергии. Поэтому, необходимо стратегическую программу в этой области сделать первоочередной и срочной.

Результативное иследование энергетических ресурсов и энергоносителей, уменьшение потерь тепла, использование экономии энергии, а также экономия денежних средств представлено в статье, на примере областей Армении, в частности на примере села Лернамердз.

NARINE MINASYAN

ECOLOGICALLY CLEAN ENERGY GENERATION IN ARMENIA

Key words: *sustainable development, renewable energy, energy efficiency,*

It is a more reasonable and right political result of alternative and especially renewable energy, so the development and implementation of a strategic plan for Armenia should be an urgent problem.

Efficient use of energy resources, energy resources, reduction of heat losses, introduction of energy saving systems, as well as savings due to them are presented in the article by the example of the communities of the RA, especially the Lernamerdz community.

ՍՈՒՍԱՆՆԱ ՄԽԻԹԱՐՅԱՆ
Միջազգային տնտեսական հարաբերություններ, մագիստրատուրա, 1-ին կուրս

ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Հիմնաբառեր. *արտաքին առևտուր, ներմուծում, արտահանում, Բալասայի համաթիվ, արտահանման ներուժ*

Արտաքին տնտեսական հարաբերությունները տնտեսության կարևոր ուղղություն են, որոնք տնտեսական գործարքների միջոցով կարգավորվում են երկրների փոխգործակցությունը: Համաշխարհային տնտեսությանը միասնացման (ինտե-

գրման) համատեքստում, երկրների միջև արտաքին տնտեսական հարաբերությունների ընդլայնումը, ելնելով համաշխարհային միտումներից, պայմանավորված է մի շարք եկամտաբերություն ապահովող ուղղությունների զարգացմամբ, ինչպես նաև արտահանման խթանմամբ:

Այսօր գլոբալացման ժամանակաշրջանում աշխարհի գրեթե բոլոր երկրները ձգտում են միասնանալ համաշխարհային տնտեսությանը և ավելի մոտենալ արտաքին աշխարհին: Յուրաքանչյուր երկրի տնտեսական վիճակը բնութագրվում է նրա արտաքին առևտրով՝ արտահանման ու ներմուծման հարաբերակցությամբ: ՀՀ արտաքին առևտրաշրջանառությունը 2017 թ. բացարձակ արժեքով կազմել է 6425,6 մլն դոլար, որը նախորդ տարվա համեմատությամբ աճել է 26,9%-ով[1]:



Գծապատկեր 1. ***ՀՀ արտաքին առևտրաշրջանառությունը*** *2010-2017* ***թթ.***, ***մլն ԱՄՆ դոլար***

Ըստ 2017 թ. հունվար-սեպտեմբերի առևտրաշրջանառության ծավալների՝ ՀՀ առևտրային գործընկերների շարքում ամենամեծ տեսակարար կշիռն ունեն համապատասխանաբար Ռուսաստանը (24,6%), Չինաստանը (9,6%), Շվեյցարիան (5,7%): Նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ առևտրաշրջանառությունն ավելացել է այնպիսի երկրների հետ, ինչպիսիք են Շվեյցարիան՝ շուրջ 3,1 անգամ, Թաիլանդը՝ 2,7 անգամ, Կիպրոսը՝ 2,3 անգամ:

Եթե անդրադառնանք արտահանում–ներմուծում հարաբերակցությանը, ապա կտեսնենք, որ 2017 թ. աճ է գրանցվել համապատասխանաբար 25,2%-ով և 27,8%-ով՝ կազմելով 2242,9 մլն դոլար և 4182,7 մլն դոլար[2]:

2017 թ. հունվար–սեպտեմբեր ամիսներին արտահանման 25,2%-ը բաժին էր ընկնում ԵԱՏՄ երկրներին: Արտահանման նվազում է նկատվել ԵԱՏՄ երկրների ապրանքների ու ծառայությունների արտահանման տեսակարար կշռում: Այսպես, նախորդ տարվա համեմատ արտահանումը շուրջ 30,8%-ով կրճատվել է Ղազախստանի, 48,6%-ով՝ Բելառուսի հետ: Մինչդեռ, դեպի Ռուսաստան արտահանման ծավալը աճել է 28,8%-ով: Դեպի ԵԱՏՄ արտահան-

[1] http://www.armstat.am/am/?nid=12&id=10001

[2] http://www.armstat.am/am/?nid=12&id=10004&submit=%D5%93%D5%B6%D5%BF%D6%80%D5%A5%D5%AC

ման կառուցվածքում գերակշռում են թեթև և սննդի արդյունաբերության, ինչպես նաև պատրաստի ապրանքները: Արտահանման 34%-ը բաժին է ընկնում «ալկոհոլային խմիչքներ» հոդվածին, մեծ տեսակարար կշիռ ունեն նաև «լուսավորման ջահ, լամպ, մասեր», «լոլիկ թարմ և պաղեցրած», «պանիր և կաթնաշոռ», «տղամարդու կոստյում, պիջակ և նման հագուստ», «հատած ծաղիկներ և կոկոններ» հոդվածները:

Աղյուսակ 1

ՀՀ առևտրաշրջանառությունը ըստ երկրների, 2017 թ.

Երկրներ	*2017 թ. հունվար-սեպտեմբեր*	*Տեսակարար կշիռը, %*	*Աճի տեմպը, %*
Ռուսաստանի Դաշնություն	1073,8	24,6	115,1
Չինաստան	417,6	9,6	133,0
Շվեյցարիա	249,1	5,7	3,1անգամ
Գերմանիա	238,1	5,5	103,1
Բուլղարիա	235,7	5,4	165,7
Իրանի Իսլամական Հանրապետություն	197,5	4,5	110,0
Վրաստան	184,0	4,2	99,2
Թուրքիա	160,6	3,7	155,7
Իտալիա	148,5	3,4	125,6
ԱՄՆ	139,9	3,2	161,2

Հաջորդ խոշոր գործընկերը արտահանման գծով ԵՄ-ն է, որին բաժին է ընկնում արտահանման 28,6%-ը: Ի տարբերություն ԵԱՏՄ-ի, դեպի ԵՄ արտահանման կառուցվածքում գերակշռում են հանքային ապրանքները:



Գծապատկեր 2. ***Արտահանման աշխարհագրական կառուցվածքը*** *2017 թ. (%)*

ՀՀ արտահանման առաջատար գործընկերներից է Շվեյցարիան: Այստեղ հիմնականում արտահանվում են «հանքաքար և խտահանք պղինձ», «ժամացույցի կորպուսներ և մասեր»: Դեպի Չինաստան արտահանվում են «պղնձի հանքաքար և խտահանք», «թանկարժեք մետաղի հանքաքար ու խտահանք», «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր», «ալկոհոլային խմիչքներ», «հանքային ջրեր»: Դեպի Իրան արտահանված առավելագույն մաքսային արժեք ունեցող ապրանքներ են «էլեկտրաէներգիան» և «ոչխարի

կամ այծի միսը»:[1] Դեպի արաբական երկրներ արտահանվում է «սիգար, սիգարելլա, սիգարետ», «ադամանդ», «ոսկերչական իրեր», «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր»:[2]

Ներմուծման ապրանքային կառուցվածքում առաջատար է հանքահումքային արտադրանքը՝ ներմուծման շուրջ 15,5%, որին հաջորդում են մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ հոդվածը՝ 15,3%, քիմիական արդյունաբերության արտադրանքը՝ 10%, պատրաստի սննդի արտադրանքը՝ 9%:

Ի տարբերություն արտահանման, ներմուծման աշխարհագրական կառուցվածքն ավելի բազմազան է: Առաջատար է ԵԱՏՄ-ն, որին բաժին է ընկնում ներմուծման 31,24%-ը՝ 1,31 մլրդ դոլար: ՀՀ ներմուծման կառուցվածքում գերակշռում են բնական և հեղուկ գազը՝ 301,5 մլն դոլար, նավթ և նավթամթերքը՝ 155,2 մլն, անմշակ ալյումինը՝ 67,3 մլն, ցորենը՝ 59,5 մլն, հեռախոսային ապարատներ և կապի այլ միջոցներ՝ 31,5 մլն և շոկոլադ ու կակաո՝ 22,5 մլն դոլար:

Հաջորդ խոշոր գործընկերը ԵՄ-ն է, ներմուծման ծավալը 2017 թ. կազմել է 903 մլն դոլար: Նախորդ տարվա համեմատ այն աճել է 27%-ով: Եմ երկրների կառուցվածքում առաջատարը Գերմանիան է՝ 202,3 մլն, հաջորդը՝ Իտալիան՝ 160,5, ապա Ֆրանսիան, Հունաստանը, Բուլղարիան:



Գծապատկեր 3. ***Ներմուծման աշխարհագրական կառուցվածքը*** *2017 թ. (%)*

Հանրապետության առևտրի զարգացման հեռանկարների մասին պատկերացում կազմելու համար օգտվենք Բալասայի համաթվից, որը վերջին շրջանում լայն կիրառություն է ստացել արտաքին առևտրի ճյուղային վերլուծության նպատակով[3]: Այս համաթիվը թույլ է տալիս բացահայտել այն ճյուղերը, որոնցում երկիրն ունի առավելություն: Այն ընդունում է արժեքներ [0; +∞) միջակայքում, և եթե համաթվի արժեքը մեծ է 1-ից, ապա երկիրը միջազգային շուկայում տվյալ ճյուղի մեջ կհամարվի մրցունակ:

[1] http://b4b.am/archives/news/
[2] http://mineconomy.am/hy/828
[3] Տե՛ս Balassa B., Trade Liberalization and Revealed Comparative Advantage, The Manchester School of Economic and Social Sciences, vol.32, no.2, 1965, էջ 99-123:

Աղյուսակ 2

ՀՀ արտահանման մրցակցային առավելությունները ըստ ապրանքային խմբերի, 2017 թ. [1]

№	Ապրանքախումբ	Բալասայի համաթիվ
1	Կաթ և կաթնամթերք, թռչնի ձու, բնական մեղր և այլ կենդանական ծագման սննդամթերք	1,8
2	Ուտելի մրգեր և ընկույզներ, ցիտրուսային կամ բոստանային մշակաբույսերի կեղևներ և կլեպներ	2,3
3	Բանջարեղեն և այլ կերային արմատապտուղներ և ելապտուղներ	3,7
4	Բանջարեղենի, պտուղների, ընկույզների և բույսերի մասերի վերամշակումից մթերք	2,9
5	Ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ և քացախ	15,1
6	Ծխախոտ և ծխախոտի արդյունաբերական փոխարինողներ	45,4
7	Հանքաքար, խարամ և մոխիր	21,7
8	Բնական և արհեստական մորթի և դրանցից պատրաստված իրեր	1,0
9	Տրիկոտաժե հագուստ և հագուստի պարագաներ, բացի մեքենայական կամ ձեռքի գործվածքից	7,3
10	Բնական կամ արհեստական մարգարիտ, թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ	5,2
11	Սև մետաղներ	1,8
12	Պղինձ և իրեր դրանից	5,9
13	Ալյումին և իրեր դրանից	4,9
14	Այլ ոչ թանկարժեք մետաղներ, մետաղակերամիկա, ապրանքներ դրանցից	3,7
15	Ժամացույցներ և դրանց մասեր	4,3

Ըստ այս համաթվի՝ երկիրը համարվում է որևէ ապրանքի արտահանման մեջ մասնագիտացված, եթե արտահանման մեջ տվյալ ապրանքի տեսակարար կշիռը գերազանցում է տվյալ տարածաշրջանի կամ աշխարհի արտահանման մեջ վերջինիս տեսակարար կշռին: Երկիրն ունի համեմատական առավելություն, եթե այս գործակցի արժեքը գերազանցում է մեկը:

Կատարված հաշվարկների համաձայն՝ արտահանման մասնագիտացման համեմատաբար բարձր ցուցանիշներ են արձանագրել հանքահումքային արտադրանքը, որի համար Բալասայի համաթիվը (RCA) 2017 թ. կազմել է 21,7, ծխախոտը և դրա փոխարինիչները՝ RCA=45,4, ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներն ու քացախը՝ RCA=15,1, տրիկոտաժե արտադրանքը՝ RCA=7,3, բնական կամ արհեստական մարգարիտը, թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարերը, թանկարժեք մետաղները՝ RCA=4,8, սև մետաղները՝ RCA=1,8, պղինձը և դրանից իրերը՝ RCA=5,9 և ալյումինն ու դրանից իրերը՝ RCA=4,9:

Համադրելով այս արդյունքները ՀՀ արտահանման փաստացի ցուցանիշների հետ՝ կտեսնենք, որ այս ապրանքներն ամենամեծ տեսակարար կշիռն ունեն ՀՀ արտահանման կառուցվածքում: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ շատ բարձր է ՀՀ արտահանման ապրանքային և աշխարհագրական կառուցվածքի համակենտրոնացման մակարդակը՝ նույնիսկ արտահանման բարձր մասնագիտացմամբ ապրանքների դեպքում: Օրինակ, «բնական կամ արհեստական մարգարիտ, թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ» ապրանքախմբի կազմում ՀՀ-ից ար-

[1] Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, http://tradecompetitivenessmap.intracen.org/TP_EP_CI.aspx?RP=051&YR=2015%20:

տահանվող շուրջ 26 անուն ապրանքներից առաջին 3-ն ապահովում են ողջ արտահանման 88,8%-ը:

Կատարված վերլուծությունից պարզ դարձավ, որ ՀՀ արտաքին առևտուրն իրականացվում է ոչ ի հաշիվ բարձր մրցակցություն ունեցող ապրանքների: Հարկավոր է ստեղծել կամ միջազգային շուկային ավելի ներկայանալի դառնալ մրցակցային առավելություն ունեցող այնպիսի ապրանքատեսակներով, որոնց նկատմամբ գործընկեր երկրներում առկա է պահանջարկ, ուստի անհրաժեշտ է՝

- գնահատել երկրի արտահանման ներուժը,
- ընտրել այնպիսի ճյուղեր, որոնք ընդունակ են արագ կողմնորոշվել դեպի արտահանում,
- ստեղծել կառուցակարգեր և պետության վերահսկողությամբ իրականացնել կառուցվածքային բարեփոխումներ,
- ներմուծման կրճատման նպատակով խթանել այն արտադրությունների զարգացումը (գյուղատնտեսություն, սննդի արդյունաբերություն), որոնք կարող են հետագայում փոխարինել ներմուծմանը:

СУСАННА МХИТАРЯН

ПЕРСПЕКТИВЫ РАЗВИТИЯ ВНЕШНЕЙ ТОРГОВЛИ АРМЕНИИ

Ключевые слова: *внешняя торговля, импорт, экспорт, индекс Балассы, экспортный потенциал.*

Внешнеэкономические связи являютсяважнейшей составляющей экономики любого государства, которые направлены на взаимодействия стран посредством экономических операций. Расширение внешнеэкономических отношений между странами, в условиях интеграции мирового хозяйства, обусловлено общемировыми тенденциями развития ряда направлений предоставлявший доходность, а также стимулирования экспорта.

SUSANNA MKHITARYAN

PROSPECTS OF FOREIGN TRADE DEVELOPMENT OF ARMENIA

Key words: *foreign trade, import, export, Balassa Index, export potential.*

Foreign economic relations are the most important component of economy of any state which are directed to interactions of the countries by means of economic transactions. Expansion of the external economic relations between the countries, in the conditions of integration of the world economy, is caused by universal tendencies of development of a number of the directions providing a production yield and stimulating export.